Արձանագրություն N 3-1

<<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/12>> ծածկագրով ՀՀ Արարատի մարզի Նոր Ուղի համայնքի նոր մանկապարտեզի (60 տեղով) կառուցման նախագծային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27 հուլիս 2017թ.
Ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Ջանջուղազյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Ռ. Եղիազարյան/ գնահատող /
	Ա. Գրիգորյան /գնահատող/
	Ֆ. Սարգսյան / բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան
Բացակայում էր Հանձնաժողովի անդամ՝	Գ. Գևորգյան/ բացող /

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

1 Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

- <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/12>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված <<Շին Նախագիծ>> ՍՊԸ-ի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են հրավերով սահմանված ժամկետի խախտմամբ (ծանուցումն ստանալու օրվանից ոչ թե երեք աշխատանքային օրվա ընթացքում, այլ չորրորդ աշխատանքային օրը):

- Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով գնահատող հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրվել են գնահատման թերթիկները և կոմիտեի կողմից ստացված տեղեկատվությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/12>> ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց

- Գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Շին Նախագիծ>> ՍՊԸ-ի հայտը մերժել:

- Գնման ընթացակարգի հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<ԱՐԽԻ-ՏՈՒՐ>> ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել <<ԱՐԽԻ-ՏՈՒՐ>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

- Ծանուցել <<ԱՐԽԻ-ՏՈՒՐ>> ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը կմերժվի և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղ զբաղեցնող մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3. <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/12>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի օգոստոսի 3-ին ժամը 15:00-ին ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Ջանջուղազյան

Անդամ՝ ---------- Ռ. Եղիազարյան

---------- Ա. Գրիգորյան

---------- Ֆ. Սարգսյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան

Արձանագրություն N 3-2

<<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/12>> ծածկագրով ՀՀ Արարատի մարզի Նոր Ուղի համայնքի նոր մանկապարտեզի (60 տեղով) կառուցման նախագծային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 3 օգոստոսի 2017թ.
Ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ջանջուղազյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Եղիազարյան/ գնահատող /
Ա. Գրիգորյան / գնահատող /
Գ. Գևորգյան / բացող /
Ֆ. Սարգսյան/ բացող /

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

- <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/12>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված <<ԱՐԽԻ-ՏՈՒՐ>> ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

- Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով գնահատող հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրվել են առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկները և կոմիտեի կողմից ստացված տեղեկատվությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա անհամապատասխանությունների մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

ա) Հավելված 5-ը և Հավելված 5.2-ը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ (որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա):

բ) 5.2 հավելվածով ներկայացված մասնագետների ցանկից բացակայում է Գայանե Կարապետյանի գրավոր համաձայնությունը իրականացվելիք աշխատանքներում ներգրավվելու մասին:

գ) անհրաժեշտ է շտկել Թաթիկ Վարդանյանի և Հռիփսիկ Մուրադյանի հետ կնքված համաձայնագրում նշված ամսաթիվը՝ 28.08.2017թ.:

դ) բացակայում են ներկայացված նմանատիպ պայմանագրի 3-րդ բաժնում նշված Հավելված 3-ը և Հավելված 3.1-ը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 32-րդ կետի 12-րդ ենթակետը և 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<ԱՐԽԻ-ՏՈՒՐ>> ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները: Համաձայն Կարգի 48-րդ կետի՝ սահմանված ժամկետում մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու դեպքում հայտը կգնահատվի բավարար: Հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի օգոստոսի 7-ին ժամը 16:00-ին ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Ա. Ջանջուղազյան

Անդամ՝ _____ Ռ. Եղիազարյան

_____ Ա. Գրիգորյան

_____ Գ. Գևորգյան

_____ Ֆ. Սարգսյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Տ. Վասիլյան

Արձանագրություն N 3

<<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/12>> ծածկագրով ՀՀ Արարատի մարզի Նոր Ուղի համայնքի նոր մանկապարտեզի (60 տեղով) կառուցման նախագծային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

07 օգոստոսի 2017թ.
Ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Եղիազարյան/ գնահատող /
Ա. Գրիգորյան/ գնահատող /
Գ. Գևորգյան/ բացող /
Ֆ. Սարգսյան/ բացող /

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

Բացակայում էր
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ջանջուղազյան

1. <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/12>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունների շտկման մասին

(Ռ. Եղիազարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/12>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում <<ԱՐԽԻ-ՏՈՒՐ>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են ներկայացրած որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ռ. Եղիազարյան)

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<ԱՐԽԻ-ՏՈՒՐ>> ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ռ. Եղիազարյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ռ. Եղիազարյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի ---------- Ռ. Եղիազարյան

Անդամ՝ ---------- Ա. Գրիգորյան

---------- Գ. Գևորգյան

---------- Ֆ. Սարգսյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան